## Արձանագրություն N 3

**ՀԱՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

**«Լրատվամիջոցներ»**

ք. Երևան 10 դեկտեմբեր 2018թ
ժամը 10:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Կարեն Սարգսյան
անդամներ՝ Էմմա Ավետիսյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռոզա Մեհրաբյան

### 1. Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Կ.Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում «Բլից Մեդիա» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Բլից Մեդիա» ՍՊԸ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 07.12.2018թ.-ի եզրակացությունը՝ ըստ որի Մասնակիցն ունի ժամկետանց հարկային պարտավորություն գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- ✓ «Բլից Մեդիա» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների գծով մերժել և այդ մասին տեղեկացնել լիազորված մարմնին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետ)
- ✓ «Բլից Մեդիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը՝ հավելված 2, գնահատել անբավարար (հաշվի առնելով, որ «Բլից Մեդիա» ՍՊԸ-ն աճուրդին հանդես չի եկել որպես գործակալության կամ համատեղ գործունեության կողմ, ինչպես նաև հրավերով լիցենզիաներ չեն պահանջվել):
- ✓ Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը հանձնաժողովը որոշեց.
- ✓ Մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին շտկել դիմումում առկա անհամապատասխանությունը:
- ✓ Նիստը վերսկսել 2018 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 11:00, 3211 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | | Կարեն Սարգսյան |
| Անդամներ | | Էմմա Ավետիսյան |
| | | Անահիտ Կարապետյան |
| Քարտուղար | | Ռոզա Մեհրաբյան |